

Հատած ետ կը դառնայ : Եթէ պատահ մամբ ասոնցմէ մէկը դաշտի, կամ գեղի մը մէջ զօրքերէ պաշարուի, որչափ ալ զինքը ստիպեն՝ անձնատուր չըլար, այլ « Հրացանիս բերանը վեր վերուցեր եմ, ալ վար չեմ ինչեցներ » ըսելով՝ կը մեռցընէ ու կը մեռնի . շատ անդամ ալ ձեռքերնէն կ'ազատի՞եթէ լերան քիչ մը մօտիկ ըլլայ : Իրենց կանայքն ալ իրենց մէ ոչ ինչ ընդհատ սրտոտ ու կտրիծ են . եթէ յանկարծ վրանին յարձակմունք մը ըլլայ նէ՝ իրենք ալ մէկմէկ գէնք կամ մէյմէկ վրանի ցից առած՝ կոռույն մէջ կը մտնան :

Զմեռը երբոր լեռները կարգէ դուրս ցուրտ կ'ըլլայ, ապահով կարծած դաշտերը կ'իջնան, և հոն կը կանգնեն իրենց թանձր ու հաստ կտաւէ վրանները՝ զոր իրենց լեզուով կ'անուանեն կօնեթէ, այսինքն վրան սեաւ :

Վրաններուն քովը եղեգէ ցանկապատած փակարան մը կայ՝ ուր կենդանիները կը պահեն : Վրաններնուն մէջը պէտք եղած գործիքներ կան, որով կանայք բաւական մաքուր գորդեր ու նման բաներ կը գործեն : Զարմանալին այն է որ, այս ժողովուրդը՝ որ այսպէս աւարառութեամբ ու անզթութիւններ ընելով իրեն կեանքը կ'անցընէ, հիւրասիրութեան կողմանէ շատ երելի է . եթէ մէկ մարդ մը ամբաւ հարստութիւններ հետը ունենալով՝ իրենց վրանները հանդիպի իրքե հիւր, ամենայն պատուով ու մեծարանք ներս կ'ընդունին, ունեցածները ապահով տեղ մը կը զետեղեն, ու իրեն համար ինչուան մասնաւոր ոչխար մորթելով՝ աղէկ ճաշ կը պատրաստեն . և առաւոտը ամեն ունեցածը իրեն յանձնելով՝ ճամփայ կը դնեն, առանց ստակ մ'ալ իրենց աշխատանաց վարձք ուղելու, թէպէտ և հեռու տեղ մը հանդիպելու ըլլար, միայն շապիով մ'ալ անոնց ձեռքէն ազատիլլը մեծագոյն մարդասիրութիւն մը պէտք է սեպիել :

Ծնողաց հեղինակութիւնը մէջերնին շատ մեծ է, որդի մը առանց հօրը հաճութեան չամնւանանար: Թէպէտ և զըլ-

խաւոր բարոյականներէ զուրկ են՝ սակայն կը հաւատան թէ ով որ թշուառի մը աղաչանացը չափէ Աստուծմէ կը պատուհասուի : Երբոր մէկը վերջի աստիճանի դժբաղդութենէ մը աղատի, մեծ հաւատք կ'ունենան թէ բաղդը ասոր շատ նպաստաւոր պիտի ըլլայ : Փիւրտերուն գլխաւոր կերակուրն են ապուր, կաթ ու մեղր . շատ համեզ ու տեսակ տեսակ պանիրներ կը շինեն ու գրաստներով հեռու տեղուանք վաճառելու կը տանին :

Հիւսիսային փիւրտստանի գլխաւոր բերքն է ցորեն, ծծումբ ու պաղեղ . իսկ հարաւային ու աւելի տաք կողմերունն է՝ տեսակ մը ցորեն, բրինձ, կընճիթ (սորսամ), տեսակ տեսակ պըտուղներ, բամբակ, ծխախոտ, մեղր, գաղպէ և տորոն, զորոնք ասդիս անզին տանելով կը վաճառեն :

Փիւրտերուն երկրին փաշայութիւններն են Պայէզիտ, Մուշ, Վան, Ճուլամերկ, Ամէտիէ, Սիւլէյմանիէ, Գարաճուան և Զախու : Ասոնց իւրաքանչիւրին իշխանութեան տակ եղած փիւրտերը միայն պատերազմի ժամանակը կը հնազանդին իրենց . անկէ գուրս՝ ոչ :

Փիւրտերը իրրե տարեսոր հարկ՝ կ.Պօլիս կը զրկեն 1,500,000 ոչխար ու այծ, հօտ հօտ բաժնուած 1500 ինչուան 2000, զոր հովիւներն կը տանին, և երթալ ու դառնալին կը տեսէ տասնուշինդէն ինչուան տասնըութ ամիս :

Սիւէզի չրանցը և խուղիա .

Թէպէտ և առիթ ունեցեր եմք Բաղմավիպին մէջ այլեայլ անզամ Սիւէզի ջրանցին վրայ համառօտ տեղեկութիւններ տալ, սակայն այս տարւոյս մարտի 12ին մէջ հրատարակած տետրմի ձեռքերնիս հասնելով Սիւէզի չրանց և խուղիաս մակաղբով, ուղեցինք թարդմանաբար հաղորդել ազգերնուա . որոյ հեղինակն է Լուֆիճի թորուկի, մի յան-

գամոց ծերակուտին խտալիոյ, և այժմ մեան նոր քաղաքապետ վենետիկոյ, այր հմուտ վաճառականութեան և երկրադութեան :

Այս էզի ջրանցը որոյ յաջող կատարած հիմա աներկբայելի է ամենուն, թէպէտ' ի սկզբան շատ ընդդիմութիւններ կրած է, աշխարհիս այն մեծամեծ գործոց կարգը պիտի անցնի, որ մարդկային կարողութիւնը կերպով մը առտուածային կարողութեան կը մերձեցունեն, զմարդ արտաքոյ քան զինքն կը բարձրացունեն, և կը ցուցընեն թէ երբ մարդկային անսասան կամաց հետձեռքերն ալ միանան, ամեն դժուարութիւնք կը հարթին մարդոյս առջե, ամեն բան կը գիւրանայ, որով և գործոյն վախճանին կը համնի մարդ յաջողութեամբ :

Այս մեծ փառքս 'ի յաւիտենից պահեալ է եղեր այս մեր դարուն, ինչպէս ուրիշ հրաշալի գիւտերէն շատերը: Փորձեցին այլեայլ անգամ մարդիկ, Քրիստոսէ երկու երեք հազար տարի առաջ սկսեալ մինչև ցայսօր՝ բանալ Սիւէզի ջրանցը բայց չյաջողեցան: Այս գործոյս մեծ պարծանքը կը տրուի Լէսէքս Գաղղիացւոյն, այր խորախորհուրդ և անխոնջ, որ տարերաց և մարդկան ամեն գժուարութիւններն արհամարհելով, ձեռք զարկաւ այս ահաւոր գործոյս, ունելով իրեն կամակից, խորհըրդակից և ձեռընտու Եղիպտոսի փոխարքայն Սայիտ փաշային, այժմեան խմայէլ փաշային նախորդը, և Սայիտ փաշային թէ և թիկունք Օսմաննեան տէրութիւնը, որով ոչ միայն Սայիտ փաշային պարծանք կը բերէ այս գործս, այլ և Օսմաննեան տէրութեան: Այս ջրանցով հնդկային վաճառականութիւնն ընդ Եւրոպիոյ նոր կենդանութիւն պիտի առնու, չնդկաստան յԵւրոպէ և Եւրոպէ 'ի չնդկաստան պիտի զիմէ: Դադրին պիտի մարց և ամուսնայց աչքերը արտասուելէ, իրենց որդոց և արանց տարաժամ և վազահամահուան վրայ, որք շատ անգամ Ռվիկանոսի անյատակ և լավիլզող ծու

վուն կերակուր կ'ըլլան: Քանիներ եւ լած են 'ի ճանապարհ 'ի խնդիր կորրստական արծաթիոյ, և զեռ չհասած 'ի Գլուխն Բարեյուսոյ, և զեռ յուսոյ հառաջանկը մը չտուած, կորնչին անգիւտ կորստեամբ: Ո'վ մարդկային շահախընդրութիւն, որ տայ արհամարհել զկեանս և զամենայն վտանգ: Արդ եթէ այս գործս յաջողի, մարդկային շահախնդրութիւնն իր վախճանին պիտի համնի սակաւ վտանգօք կենաց:

Այսչափ ինչ իրը նախաշաւիդ մեր կողմանէ խօսելով Սիւէզի ջրանցին բացման վրայ, թողումք հիմա խօսել լուինի թորբէլլիին, թէ ինչպէս սկսած է այս գործս, ինչ դժուարութիւններ կը բած է, ինչ օգնականութիւններ ունեցած է, ուր հասած է և ինչ է նպատակը, և թէ նկատմամբ խտալիոյ ինչ օգտակարութիւններ ունի:

1865ին Ապրիլի մէջ, պաշտօնեայն երկրագործութեան և վաճառականութեան և պաշտօնեայն հասարակաց շինուածոց, և խտալիոյ քսան և հինգ վաճառականութեան ժողովարանք միաբան որոշեցին մասնաւոր նուիրակներ Եղիպտոս խաւրելու, ներկայ գտնուելու համար համազգային ժողովոյն, որ առաջարկեալ էր 'ի խնդրոյ Լէսէքսի նախագահի և սկզբնապատճառի Սիւէզի ջրանցին, որ պիտի միացունէ ըզ Միջերկրականը՝ կարմիր ծովուն հետ:

Այդ նուիրակաց գործը զիսաւորապէս երկու կարեսը ձեռնարկութիւն պիտի ըլլար, նախ քննել նայիլ եղած աշխատութեանց որպիսութիւնը, յաջողութեան կարելիութիւնը, և Երբ վախճան ունենալը: Երկրորդ, թէ կարելի էր արդեօք զեռ աշխատութիւնը չիլմնցածնաւարկել գէթ մինչև կէս ճանապարհ, այսինքն մինչև անոյշ ջրոյ ջրանցը՝ որ խամայիլէն կ'երթայ 'ի Սիւէզ:

Քննիչները՝ խաւրովներուն փափազանաց համեմատ՝ զովեստով կատարեցին իրենց պարտքը, և 'ի գարձին յԵւրոպտոսէ՝ շատերը կարեսը տեղեկու-

թիւններ հրատարակեցին, ոմանք առանձին յօդուածով, և այլք միաբանօրէն հասարակաց հաւանութեամբ և ստորագրութեամբ. ասոնք ամենն ալ գովելի տեղեկութիւններ են՝ տասնըմէկ հատի չափ : Արդ լաւ իմանալու համար թէ ինչ ազդեցութիւն ըրած է գնացողաց մոտաց վրայ այն նոր և մեծ ձեռնարկութիւնը, պէտք է նախ գիտնալ որ նոյն միջոցին ֆէլլահներու տարապարհակ աշխատառթիւնը դադրած էր՝ որք են եգիպտացի բնիկ երկրագործներ, թուով 25,000ի չափ, զորսեգիպտասի փոխարքայն ձրիաբար ընկերութեան պարտաւորեալ էր յանձնել . ուստի փոխանակ այնչափ աշխատաւորաց պիտի փոխանակէին ան ատեն մեքենայք՝ և փոխանակ ֆէլլահներու ազատ աշխատաւորք : Ուստի փոփոխութեան ժամանակ ըլլալով, շատ բանի մէջ կրնար տարակոյս ծագիլ և չէր կրնար գիտցուիլ թէ փորձը և նորանոր փոփոխութիւնները ինչ վախճան պիտի ունենային :

Տրուած տեղեկութիւնները ստոյգ
են և հաւատարիմ։ Ամենքը միօրինակ
զգածմամբ գովեցին մինչև ցայնժամ ե-
ղածը, և հաստատեցին որ ստուգիւ աշ-
խատութիւնը առաջ կ'երթայ և վախ-
ճանին կը համնի։ Բայց թէ գործը երբ
կրնայ լմննալ, բազմութեան կարծիքը
այս խնդրոյն վրայ այս եղաւ, թէ այժ-
մեան աշխատութե հանդամանաց նայ-
ելով անկարելի է ճշգել ժամանակը։
Վասնզի ոչ մեքենայից բազմութիւնը և
զօրութիւնը կրնային հաւասարել ֆէլ-
լահներուն աշխատութեան, որոց գոր-
ծը զարմանք կը բերէր ամենուն, և ոչ
իսկ Եւրոպայէն եկած անհամար ազատ
աշխատաւորները կրնային անոնց հա-
ւասարիլ։ Վասն զի թէպէտ և մեքենայ-
ները գործոյն զլսաւոր մասը կը կատա-
րեն, սակայն միշտ կարօտ են նաև
մարդկային ձեռաց։ Իսկ այն խնդիրը,
թէ Եւրոպայի վաճառականութիւնը
այժմէն իսկ կրնայ արդեօք առժամա-
նակեայ անցք մը ունենալ, բազմաց օգ-
տակար չերեցաւ, տեսնելով նաւար-

կութեան ջրանցին քիչ խորութիւնը ,
և անոյշ ջրոյ ջրանցին մէջի ջրոյն սա-
կաւութիւնը : Առջինը միջին համեմա-
տութեամբ իրը մէկ մէդր խորութիւն
ունէր , և տեղ տեղ աւելի նուազ . երկ-
րորդը , դեռ ուղղակի Նիլոսէ ջուր չէր
ընդունէր , այլ վտակէ մը , որ ջուր կու-
տար այս նոր ջրանցին , որոյ երկայնու-
թիւնն էր իրը 126 հազարամէդր : Եւ
սակայն դիպուածով այն ժամանակ ին-
կան այս քննութիւններն , երբ Նիլոսի
ջուրց սաստիկ նուազման ժամանակն էր :

Արդ ամեն նուիրակաց կարծիքը ,
պարզաբար և համառօտիւ կը բովանդա-
կի Քարանթի ասպետին խօսքին վրայ ,
որ էր նուիրակ երկրագործութեան և
վաճառականութեան պաշտօնէին , որ
կ'ըսէ , թէ Ամենայն կերպով համո-
զեալ եմ թէ ոչ միայն այս մեջ գործը
կարելի է , այլ և շուտով կ'աշարտի ,
եթէ ըստ մեծուրեան և կարեորու-
թեան նորա 'ի գործ դրոշին միջոց-
ները :

Եթէ տէրութեան երկու պաշտօնէից
նուիրակները , և եթէ վաճառականու-
թեան ժողովարանաց նուիրակներն տե-
սածնին ստուգութեամբ պատմելով ,
գործոյն աւարտման ժամանակը ան-
ստոյդ թողուցին , և կը սպասէին փոր-
ձով տեղեկանալ , որ դեռ շատ խնդիր-
ներ պիտի պարզէր : Եւ սակայն իտա-
լիոյ մէջ հասարակաց կարծիքը առա-
ւել յայն հակեցաւ , թէ երկայն և ան-
ստոյդ ժամանակի կարօտ է Սիւէզի
անգրին վճարումը :

Նուիրակաց քննութիւնները ոչ ա-
մենքը ծածուկ մնացին, այլ շատերը
հրատարակեցան։ Բազմաց մէջ միոյն
ըսածը միայն յառաջ բերեմ որ է Մի-
լանու վաճառականութէան ժողովա-
րանին նուիրակը, Վիլլա Բերնիչէ, որ
յետ ըսելու թէ «Երբ շուտով քացուե-
լու ըլլայ նոր ձանապարհը, խոալիա
անպատրաստ գոնուելով պիտի տես-
նէ այլոց օգործ քաղելը, ուր ընդ հա-
կառակն» կը յաւելու «Երե գործը յա-
պաղի 6 կամ 8 տարի, այս ափ մի-
ջոցիս մէջ բարական կ'ըլլայ խոալիա

իր զօրութիւնը չափելով պատրաստուելու այդ գործը իրեն օգտակար ընկերու համար :

Թէպէտ և ինքն ալ չէր համողուածոր ջրանցը կարենայ 1868ին բացուիլ, և սակայն չհամարիր որ երկայն ժամանակ ուշանայ, և կը յուսայ որ 1871ին անվրէպ բացուի : Եւ սակայն հակառակ կարծիքը նախադաս կը համարուէր ժողովրդեան մէջ, որ չէր կարող գործոյն վրայ ուղիղ զատաստան ընել, կրիւք և սխալ կարծեզք զգածեալ ըլլալով : Գիտնականներն իսկ տարակուսեցան թէ ինչ ըսեն, այնչափ 'ի սկզբան կարծիքները գիտնոց մէջ չհամաձայնեցան, ուստի զարմանք չէ եթէ ժամանակին որոշումը կարծածնէն ուշինկաւ :

Երկու տարի անցաւ, և խնդիրը շատ առաջ գնաց : Անցեալ յունուարի մէջ այցելութեան գնացի այն աշխատութեանց, ոչ անցողաբար ինչպէս 'ի պաշտօնէ սահմանեալ քննիչները ըրին, որք խալուած էին Եւրոպիոյ ամեն կողմէն, նաև Ամերիկայէն, Ասիայէն և Պարսկաստանէ, այլ ուշի ուշով ու շատ շաբաթներ նուիրելով : Առանձին տրւեալ տեղեկութիւններէ, նոր մեքենայից գործածութենէ և իւրաքանչիւր գործերէ կը ցայ ստուգել եթէ 1865ին տրուած տեղեկութեանց ստուգութիւնը, և թէ ներկայ ժամանակիս եղած յառաջադիմութիւնը : Ուստի իմ տրւած տեղեկութիւններս առաջիններուն հակառակ չեն ելներ, այլ անոնց լրումն կու տան . կը լուծեն անլոյժ խնդիրները և տարակոյնները : Գիտնալով որ ճշմարտութիւնը միայն անյաղթելի է, ջանամ պիտի ըստ իմ կարեաց հաւատարիմ թարգման ըլլալ անոր : Ես որ գործոյն ջերմ պաշտպաններէն և զըրգուիչներէն մէկը համարուած եմ, որուն վրայ միշտ կը պարծիմ, պարտ անձին կը համարիմ ըսել այն բանը որոյ ստուգութեան վրայ ապահով ըլլամ : Ուստի որոշեցի 'ի բաց թողուլ տարակուսական գործեր և մանրամասն տեղեկութիւններ, և միայն յիշատակել ըս-

տոյգ գիտողութիւններ, և 'ի վերջէ յայտնել իմ կարծիքս :

Այս գործոյս վրայ ստոյգ գաղափար մը առնելու համար, հարկաւոր է նախքննել, թէպէտ և համառոտիւ, թէ բընութիւնն ինչ գմուարութիւններ առջև դրած է երկրին դրից պատճառաւա . թէ ինչպէս այս խորհուրդը մէջտել ելած է, և ինչպէս սկսած . և թէ ինչ կերպարանք առած է մինչև այժմեան վիճակը հասնելու համար . և որոյ վրայ գլխաւորապէս կ'ուզեմ մանրամասն խօսիլ :

Կը շարունակուի :

Քանինիդիք երսդան .

Հարկ չկայ որ խելացի մարդ մը Ամերտամ կամ աշխարհիս ուրիշ որ և իցէ տեղը երթայ, մարդկային գործոց յողդողդութեանը վրայ արդարացի խորհրդածութիւններ ընելու համար . ամեն օր առանց տնէն ելլալու կրնայ իրեն վիճակին վրայ գոհ ապրիլ սորվիլ և չցանկալ այն հարստութեանց և զեղիս վայելից՝ որոնք այնչափ սուղի կը նըստին և այնպէս քիչ ալ կը դիմանան : Բայց եկուր նայէ որ դիպուածին ուզելովը իրաւոցնէ Ամսդերտամի մէջ եղաւ որ Գերմանացի երիտասարդ գործաւոր մը ճանչցաւ սոյն բարոյական ճշմարտութիւնը :

Այս վաճառականութեան մեծ և հարուստ շահաստանը հասնելուն պէս, որ լի է փառաւոր տուններով, նաւահանգիստը գեղեցիկ նաւերու բազմութենէ և դարափունքը գործունեայ և աշխոյժ մարդիկներով ծածկուած, ուրիշ տուններէ աւելի աղուորկեկ տուն մը իրեն ուշադրութիւնը դրաւեց, որուն նմանը բնաւ չէր տեսած բոլոր ճամբորդութեանը միջոց և զարմացաւ մնաց :

Ցետ երկայն ատեն դնելու այս գե-